



**«Կառավարության ֆինանսների կառավարման  
տեղեկատվական համակարգի» ներդրման ծրագրի  
ՓՈԻԼ 2.2-ի Հաշվետվություն**

**ԿՏԿՏՀ ներդրման մոդել  
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ**

## Բովանդակություն

Ներածություն.....	3
1. Առկա վիճակի ամփոփում .....	4
1.1 Եզրակացություն.....	4
<b>2. Առաջարկվող Ներքին Աուդիտի մոդուլի կառուցվածք .....</b>	<b>6</b>
2.1 Դերեր .....	8
2.2 Մոդուլներ/Ենթամոդուլներ .....	9
2.3 Փոխանակվող տվյալներ.....	11
<b>3. Ֆունկցիոնալ նկարագրություն .....</b>	<b>13</b>
3.1 Աուդիտորների կառավարում .....	13
3.1.1 Դիմումների ներկայացում .....	13
3.1.2 Ռեեստրի գործառույթներ .....	15
3.2 Ներքին Աուդիտ.....	19
3.2.1 Ներքին աուդիտի միջավայրի ձևավորում .....	20
3.2.3 Գործողությունների պլանի սահմանում .....	25
3.2.4 Տարեկան հաշվետվություն .....	26

## Ներածություն

Սույն փաստաթղթում ներկայացված է ԿՖԿՏՀ շրջանակներում Ներքին Առևտրի մոդուլի կառուցվածքային և ֆունկցիոնալ նկարագրությունը, ինչպես նաև մոդուլի փոխգործակցությունը ԿՖԿՏՀ այլ մոդուլների և արտաքին աղբյուրների հետ:

Առաջարկվող մոդուլի մշակման ընթացքում հաշվի են առնվել պատասխանատու ստորաբաժանումների կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Փաստաթուղթը բաղկացած է 3 բաժիններից.

1. Առկա իրավիճակի ամփոփում - ներկայացված է նախորդ փուլում իրականացված ուսումնասիրության ամփոփումը, առկա էլեկտրոնային համակարգերի միջև կապերը, դրանց առավելություններն ու թերությունները, ինչպես նաև տրամադրված է եզրակացություն՝ հիմք ընդունելով առկա բիզնես գործընթացների ամփոփման արդյունքները:
2. Ներքին Առևտրի մոդուլի կառուցվածք - ներկայացված է ներքին առևտրի գործընթացի ամբողջական ավտոմատացման հնարավոր լուծման կառուցվածքը՝ հիմք ընդունելով առկա բիզնես գործընթացների ամփոփման արդյունքները:
3. Ներքին Առևտրի մոդուլի ֆունկցիոնալ հնարավորություններ - ներկայացված է գործընթացների օպտիմալացման և ավտոմատացման ֆունկցիոնալ նկարագրությունը:

# 1. Առկա վիճակի ամփոփում

ԿՖԿՏՀ-ում ներառվող ներքին աուդիտի բիզնես գործընթացների վերլուծության, դիագնոստիկայի և վերջնական բիզնես գործընթացների վերհանման/ձևակերպման նպատակով ուսումնասիրվել է ինչպես ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի օրենսդրական դաշտը, ներքին աուդիտին վերաբերող առկա տարատեսակ տեղեկատվությունը, այնպես էլ հանրային հատվածի ներքին աուդիտին առնչվող այլ երկրներում կիրառվող որոշ ընթացակարգեր: Ուսումնասիրման արդյունքում կազմվել են ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի ներկայումս կիրառվող բոլոր բիզնես գործընթացների նկարագրությունները: Բիզնես գործընթացների նշված նկարագրությունները ներկայացված են նախորդ փուլում ներկայացված փաստաթղթերում:

Ներքին աուդիտի կառավարման ներկայումս իրականացվող բիզնես գործընթացների նկարագրման և վերլուծության արդյունքում արձանագրվել են, որ առկա են բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ է կամ լրջորեն վերանայել, կամ ընդհանրապես հանել:

Օրինակ 1: ներքին աուդիտորի որակավորման գործընթացում, երբ խոսքը վերաբերում է ՀՀ ՖՆ կողմից կացմակերպվող և իրականացվող ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման քննություններին, ըստ էության գործում են իրարից անկախ երկու էլեկտրոնային համակարգ: Մի համակարգի միջոցով քաղաքացիները դիմում են ներկայացնում ՀՀ ՖՆ՝ ներքին աուդիտորի որակավորման քննությանը մասնակցելու նպատակով, իսկ մյուս համակարգի միջոցով կազմակերպվում և անցկացվում է նշված քննությունը, ինչպես նաև այդտեղ պահպանվում են քննության մասնակիցների տվյալները, արձանագրած արդյունքները, թեստերի պատասխաններն ըստ հարցերի, և այլն: Նշված երկու համակարգերը միմյանց հետ որևէ կերպ կապված չեն և դիմորդների տվյալները թեստավորման համակարգ ներմուծվում է մեխանիկորեն, այսինքն ՀՀ ՖՆ համապատասխան բաժնի աշխատակիցը ձեռքով մուտքագրում է տվյալները:

Օրինակ 2: Բուն ներքին աուդիտի գործընթացում ներկայումս որևէ ավտոմատացված համակարգ չի կիրառվում: Այս հանգամանքը նշանակալիորեն բարդացնում է ինչպես ներքին աուդիտի պլանավորման, իրականացման, հաշվետվողականության, վերստուգման և որակի վերահսկման ու գնահատման գործընթացը, այնպես էլ գրեթե անհնարին է դարձնում ՀՀ հանրային հատվածի տարբեր կազմակերպությունների ներքին աուդիտի միավորների գործունեության արդյունքների համադրումը, տարատեսակ վերլուծությունների իրականացումը:

## 1.1 Եզրակացություն

ԿՖԿՏՀ-ում անհրաժեշտ է ներդնել Ներքին Աուդիտի մոդուլ, որը թույլ կտա.

- Վարել աուդիտորների ռեեստր՝ փոխկապակցված որակավորումների և վերապատրաստումների հետ,
- Ներքին աուդիտի գործընթացը կազմակերպել ավտոմատացված համակարգի միջոցով, որը ապահովում է տվյալների փոխանակումը ԿՖԿՏՀ մյուս մոդուլների հետ,
- Անհրաժեշտ գործառույթներն իրականացնել մեկ համակարգի/մոդուլի շրջանակում,
- Կենտրոնացնել տվյալները,
- Ապահովել հասանելիություն՝ համապատասխան լիազորություններով օգտատերերին:

## 2. Ներքին Աուդիտի մոդուլի կառուցվածք

Հաշվի առնելով՝ ԿՖԿՏՀ շրջանակում առաջարկվող մոդուլյար սկզբունքը<sup>1</sup>՝ առաջարկվում է ԿՖԿՏՀ կոնցեպտում ներքին աուդիտի գործընթացների համար նախատեսել Ներքին Աուդիտի մոդուլ, որը հնարավորություն կունենա ստանալ ԿՖԿՏՀ այլ մոդուլներում, ինչպես նաև արտաքին համակարգերում մշակվող տվյալներ:

Քանի որ, ԿՖԿՏՀ բոլոր մոդուլներում մշակվող անալիտիկ տվյալները պահպանվում են Անալիտիկ-Հաշվետվողկան մոդուլում (ԿՖԿՏՀ ներդրման մոդել), ուստի, Ներքին Աուդիտի մոդուլը կարող է անհրաժեշտ տվյալները ստանալ հենց այդ մոդուլից: Իսկ իր կողմից մշակվող անալիտիկ տվյալները նույնպես կարող են պահվել վերոնշյալ մոդուլում:


Միաժամանակ, ներքին աուդիտի գործընթացի ամբողջական ապահովման նպատակով առաջարկվում է ներդնել նաև Աուդիտորների կառավարման մոդուլ, որի մեջ ներառված կլինեն դիմումների և ռեեստրի ենթամոդուլները, և փոխկապակցված կլինի թեստավորման, վերապատրաստման մոդուլների<sup>2</sup> հետ, ինչի միջոցով աուդիտորի որակավորում ունենալու նպատակով դիմած անձանց թեստավորման, հետազայում նաև վերապատրաստման գործընթացներում մշակված տվյալները կտրամադրվեն Ռեեստրին:

Ներքին Աուդիտի մոդուլի առաջարկվող կառուցվածքային սխեման բերված է նկար 2.1-ում.

---


<sup>1</sup> Մանրամասները ներկայացված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում:

<sup>2</sup> Մանրամասները ներկայացված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթի Գլուխ 5, 6 բաժիններում:



**Նկար 2.1 Ներքին Աուդիտի մոդուլի կառուցվածք**

Ներքին Աուդիտի մոդուլի կառուցվածքային սխեմայի տվյալների հոսքը ներկայացված է նկար 2.2-ում



**Նկար 2.2 Ներքին Աուդիտի մոդուլի տվյալների հոսք**

Կառուցվածքում առկա կոմպոնենտների և դրանց կիրառող դերերի նկարագրությունը բերված է հաջորդիվ:

## 2.1 Դերեր

**Դիմորդ** - հանդիսանում է ՀՀ քաղաքացի այն օգտատերը, որի տվյալները (որպես ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտոր) առկա չեն Ռեեստրում: Դիմորդը կարող է օգտվել միայն Դիմումների ենթամոդուլից և Թեստավորման մոդուլից:

**Աուդիտոր** - հանդիսանում է այն օգտատերը, որի տվյալները (որպես ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտոր) առկա են Ռեեստրում ցանկացած կարգավիճակով (վավեր, անվավեր): Վավեր կարգավիճակ ունեցող աուդիտորը կարող է օգտվել Ներքին Աուդիտի ենթամոդուլից (թույլտվությունները սահմանվում են օգտվողների կառավարման մոդուլի



միջոցով – նկարագրությունը «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում),  
Վերապատրաստման մոդուլից և բոլոր այն մոդուլներից, որոնք հասանելի են Դիմորդին:

**Աուդիտի ղեկավար** - հանդիսանում է այն օգտատերը, որը լիազորություն ունի կոնկրետ կազմակերպության համար սահմանելու աուդիտի միջավայրը:

**Լիազոր մարմին** - հանդիսանում է այն օգտատերը, որին Ներքին աուդիտի մասին ՀՀ օրենքով տրված է համապատասխան լիազորություններ՝ օգտվողների կառավարման մոդուլի միջոցով: Կարող է օգտվել Ռեեստրի ենթամոդուլից (ռեեստրի վարում), Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլից և բոլոր այն մոդուլներից, որոնք հասանելի են Աուդիտորին:

**Աուդիտի միավորի պատասխանատու** - հանդիսանում է այն օգտատերը, որին աուդիտի առաջադրանքի արդյունքում արձանագրված խնդիրների լուծման համար նշանակում են կատարող կամ պատասխանատու:

## 2.2 Մոդուլներ/Ենթամոդուլներ

**Աուդիտորների կառավարման մոդուլ** - Կազմված է երկու ենթամոդուլներից՝ Դիմումներ, Ռեեստր:

**Ռեեստրի ենթամոդուլ** - Թույլ է տալիս Լիազոր մարմնին պահել և վարել ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորներին վերաբերող տվյալները: Ենթամոդուլը փոխգործակցում է.

- Դիմումների ենթամոդուլի հետ՝ դիմումների (ԱԿ3) համաձայն միանգամից ռեեստրում գրանցվելու համար (միջազգային կամ Լիազոր մարմնի կողմից ճանաչված սերտիֆիկատի առկայության դեպքում)
- Թեստավորման մոդուլի հետ՝ թեստի արդյունքների ստացման (Թ1) և մշակամ համար
- Վերապատրաստման մոդուլի հետ՝ վերապատրաստման արդյունքների ստացման (Վ1) և մշակման, ինչպես նաև ռեեստրում առկա աուդիտորների տվյալների տրամադրման համար (ԱԿ2), որոնց համար պետք է իրականացվի վերապատրաստում
- Անալիտիկ-հաշվետվողական մոդուլի հետ՝ տրամադրելով ռեեստրի անալիտիկ տվյալներ (ԱԿ4), որոնք հետագայում կարող են կիրառվել ԿՖԿՏՀ այլ մոդուլների կողմից, այդ թվում հանրային տվյալների տրամադրելու նպատակով:

Պրոցեսների մանրամասն նկարագրությունը բերված է “Ռեեստրի ենթամոդուլ” բաժնում:

**Դիմումների ենթամոդուլ** - Թույլ է տալիս Դիմորդներին ներկայացնելու էլեկտրոնային դիմումներ Թեստավորման (ԱԿ1) և/կամ Ռեեստրում գրանցվելու համար (ԱԿ3):

**Ներքին աուդիտի մոդուլ** - Կազմված է երկու ենթամոդուլներից՝ Աուդիտի միջավայր և Աուդիտ:

**Աուդիտի միջավայր** - Թույլ է տալիս Աուդիտի ղեկավարին կազմելու տվյալ կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, դրա հիման վրա իրականացնել ներքին աուդիտի ռիսկերի գնահատում և կազմել ու հաստատել ռազմավարական և տարեկան ծրագրերը: Աուդիտի միջավայրը անհրաժեշտ տվյալներ է ստանում Անալիտիկ-հաշվետվողական մոդուլից (ԱՀ8) և տվյալներ է տրամադրում Աուդիտի ենթամոդուլին (ՆԱ1):

**Աուդիտի ենթամոդուլ** - Թույլ է տալիս Ներքին աուդիտորին իրականացնել աուդիտորական առաջադրանքների պլանավորում, իրականացում, հաշվետվությունների կազմում, գործողությունների պլանի մշակում և վերստուգման գործընթացը: Նաև թույլ է տալիս Լիազոր մարմնին մշակել և ներդնել որոշակի կարգավորումներ, որոնց հիման վրա Աուդիտորները իրականացնում են գործունեություն՝ օգտագործելով նաև ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ գործիքակազմ: Աուդիտի ենթամոդուլը անհրաժեշտ տվյալներ է ստանում Անալիտիկ-հաշվետվողական մոդուլից (ԱՀ8) և Աուդիտի միջավայրի ենթամոդուլից (ՆԱ1):

Պրոցեսների մանրամասն նկարագրությունը բերված է “Ներքին Աուդիտ” բաժնում:

Աուդիտի միջավայրի և Աուդիտի ենթամոդուլները տվյալներ են տրամադրում Անալիտիկ-հաշվետվողական մոդուլին (ՆԱ2)՝ հետագա վերլուծություններ և հաշվետվությունների ձևավորման համար:

**Թեստավորման մոդուլ** - Օգտվելով Դիմումների ենթամոդուլի տվյալներից (ԱԿ1), թույլ է տալիս դիմում ներկայացրած Դիմորդներին հանձնել Քննություն/Թեստ, ինչպես նաև Ռեեստրում առկա աուդիտորներին՝ հանձնել շարունակական մասնագիտական վերապատրաստման Թեստ: Տրամադրում է տվյալներ Ռեեստրի ենթամոդուլին (Թ1)՝ համապատասխան արդյունքներով Դիմորդներին ռեեստրում գրանցելու համար կամ Աուդիտորների՝ ռեեստրում մնալու ժամկետի երկարացման համար: Այս ենթամոդուլը հասանելի է Լիազոր մարմնին, որին թույլ է տալիս ստեղծել Քննության/Թեստի հարցաշարեր, կազմակերպել և անցկացնել Քննություններ/Թեստեր:

Մոդուլի մանրամասները նկարագրված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում:

**Վերապատրաստման մոդուլ** - Թույլ է տալիս Լիազոր մարմնին կազմակերպել օնլան կամ օֆլայն վերապատրաստման կուրսեր, ընդգրկել կուրսերում համապատասխան Աուդիտորների (ԱԿ2), վարել հաճախման և/կամ գնահատման մատյաններ և այլն: Աուդիտորները, օգտվելով այս մոդուլից, կարող են անցնել վերը նշված կուրսերը և պահպանել որակավորումը:

Վերապատրաստման մոդուլը օգտվում է Ռեեստրից (ԱԿ2), որպեսզի թույլ տա միայն վերջինում գրանցվածների մասնակցությունը կուրսերին, ինչպես նաև գնահատելու, թե ինչ կուրսեր և քանի հոգու համար պետք է կազմակերպել: Բացի տվյալներ ստանալուց, Վերապատրաստման մոդուլը նաև կարող է տրամադրել վերապատրաստված Աուդիտորների տվյալներ Ռեեստրին (Վ1)՝ դրանում փոփոխություն կատարելու համար:

Մոդուլի մանրամասները նկարագրված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում:

**Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ** - մոդուլը թույլ է տալիս ներքին աուդիտի գործառույթների իրականացնել հիմնվելով բոլոր մոդուլներից հավաքագրված անալիտիկ տվյալների վրա (ԱՀ8), որից օգտվում են Աուդիտի և Աուդիտի միջավայրի ենթամոդուլները: Այս մոդուլից օգտվում է նաև Լիազոր մարմինը՝ տարատեսակ վերլուծությունների և հաշվետվությունների կազմման համար: Այն ապահովելու համար, Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը օգտվում է նաև Աուդիտի միջավայրի և Աուդիտի ենթամոդուլների տվյալներից (ՆԱ2):

Մոդուլի մանրամասները նկարագրված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում:

### 2.3 Փոխանակվող տվյալներ

Ինտերֆեյս	Տվյալներ	Տրամադրող մոդուլ/ենթամոդուլ	Կիրառող մոդուլ/ենթամոդուլ
ԱԿ1	Դիմում՝ թեստավորմանը մասնակցելու համար	Դիմումներ ենթամոդուլ	Թեստավորում մոդուլ
ԱԿ2	Վերապատրաստման ենթակա աուդիտորների վերաբերյալ տեղեկատվություն	Ռեեստր ենթամոդուլ	Վերապատրաստում մոդուլ
ԱԿ3	ՀՀ-ում հանրային հատվածում ընդունելի այլ կառույցների կողմից տրված որակավորումը հավաստող տվյալներ	Դիմումներ ենթամոդուլ	Ռեեստր ենթամոդուլ
ԱԿ4	Անալիտիկ տվյալներ	Ռեեստր ենթամոդուլ	Անալիտիկ հաշվետվողական մոդուլ
Թ1	Թեստի արդյունքներ	Թեստավորում մոդուլ	Ռեեստր ենթամոդուլ
Վ1	Վերապատրաստման տվյալներ	Վերապատրաստում մոդուլ	Ռեեստր ենթամոդուլ
ՆԱ1	Ներքին աուդիտի համար անհրաժեշտ տեղեկատվություն 1. Ռազմավարական և տարեկան ծրագրեր	Աուդիտի միջավայր ենթամոդուլ	Ներքին աուդիտի ենթամոդուլ 1. Աուդիտի ենթամոդուլ,

<b>ՆԱ2</b>	Ներքին աուդիտի մոդուլում ստեղծված անալիտիկ տեղեկատվություն	Ներքին աուդիտի մոդուլ/ բոլոր ենթամոդուլներ	Անալիտիկ հաշվետվողական մոդուլ
<b>ԱՀ8</b>	ԿՖԿՏՀ բոլոր մոդուլներում մշակված անալիտիկ տվյալներ 1. Ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ անալիտիկ տվյալ	Անալիտիկ հաշվետվողական մոդուլ	Ներքին աուդիտի մոդուլ 1. Աուդիտի ենթամոդուլ
<b>ԱՀ20</b>	Հաշվետվություններ, վերլուծություններ	Անալիտիկ հաշվետվողական մոդուլ	

### 3. Ֆունկցիոնալ հնարավորություն

#### 3.1 Աուդիտորների կառավարում

##### 3.1.1 Դիմումների ներկայացում


ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների Ռեեստրում ընդգրկվելու նպատակով ՀՀ քաղաքացիները կարող են ներկայացնել համապատասխան էլեկտրոնային դիմում: Նշված Դիմումները երկու տեսակի են.

- եթե Դիմորդն ունի ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում ընդունելի որակավորումներից առնվազն մեկը հավաստող փաստաթուղթ՝ սերտիֆիկատ, ինչի հիման վրա, օրենսդրությամբ սահմանված կարգով ցանկանում է գրանցվել Ռեեստրում:
- եթե Դիմորդն ուզում է մասնակցել ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման քննությանը/թեստին:

Թեստավորման դիմումի համար առաջարկվում է դիտարկել երկու տարբերակ.

- Դիմումի ներկայացման հնարավորություն միայն ակտիվ Քննության/Թեստի առկայության դեպքում,
- Դիմումի ներկայացում ցանկացած պահի, այսինքն անկախ Լիազոր մարմնի կողմից Քննության/Թեստի կոնկրետ օր նշված լինելու հանգամանքից:

Երկրորդ տարբերակում, հենց որ Լիազոր մարմինը նշանակում կամ ակտիվացնում է Քննություն/Թեստ, ապա դիմումի հաստատման դեպքում դիմորդը գրանցվում է տվյալ քննությանը/թեստավորմանը: Իսկ եթե ակտիվ թեստավորում առկա չէ, ապա դիմումը գրանցվում է և հետագայում՝ թեստավորում ակտիվացվելու դեպքում, տվյալ դիմումը (կամ այլ դիմորդների կողմից արդեն ներկայացված նմանատիպ դիմումները) ընդունվում են նոր ակտիվացված թեստավորման համար, իսկ դիմորդները՝ ծանուցվում: Սա թույլ կտա Լիազոր մարմնին հետևել դիմումների քանակին, և, ելնելով դրանից՝ կազմակերպել թեստավորում:



Նպատակ	Դիմումների ներկայացում թեստավորման մասնակցելու համար:
Նկարագրություն/ընթացք	<ul style="list-style-type: none"> <li>➤ Դիմորդը մուտք է գործում Դիմումների ենթամոդուլի համապատասխան բաժին և ընտրում դիմումի իր ցանկացած տեսակը՝ <ul style="list-style-type: none"> <li>○ Ռեեստրում գրանցում համապատասխան որակավորման առկայության դեպքում,</li> <li>○ Որակավորման քննության մասնակցություն:</li> </ul> </li> <li>➤ Դիմորդը բացված պատուհանում լրացնում է համապատասխան տվյալները և կցում անհրաժեշտ փաստաթղթերը: Մի դեպքում, բացի անձնական տվյալներից, դա կարող է լինել այլ որակավորում(ներ)ը հավաստող սերտեֆիկատ(ներ), իսկ մյուս դեպքում այլ անհրաժեշտ փաստաթղթեր:</li> <li>➤ Լիազոր մարմնի համապատասխան իրավասություն ունեցող աշխատակիցը ուսումնասիրում է ներկայացված դիմում(ներ)ը: Եթե դրան(ց)ում կան թերություններ, ապա այն</li> </ul>

	<p>հետ է վերադարձվում Դիմումատուին՝ առկա թերությունները վերացնելու: Եթե ներկայացված Դիմում(ներ)ը ենթակա են մերժման, ապա աշխատակիցը մերժում է և գործընթացն ավարտվում է:</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Եթե Դիմում(ներ)ում թերություններ, ինչպես նաև մերժման հիմքեր չկան, ապա Լիազոր մարմնի աշխատակիցը, կախված դիմումի տեսակից, ընտրում է դիմումի համապատասխան ընթացքը, մի դեպքում գրանցում Ռեեստրում, մյուս դեպքում՝ գրանցում Քննության/Թեստավորման մասնակիցների ցանկում:</li> <li>➤ Պրոցեսն ավարտվում է Ռեեստրում և/կամ Թեստավորման մոդուլում Լիազոր մարմնի աշխատակցի նախորդ կետում կատարած քայլի գրանցմամբ:</li> </ul>
<b>Հղում առկա գործընթացին</b>	BP-IA-01-01, BP-IA-01-02, BP-IA-01-03, BP-IA-01-04, BP-IA-01-05
<b>Տիրույթ</b>	Աուդիտորների կառավարման մոդուլ՝ Դիմումների և Ռեեստրի ենթամոդուլ, Թեստավորման մոդուլ
<b>Դերակատարներ</b>	Դիմորդ, Լիազոր մարմին
<b>Մուտքային տվյալներ</b>	Դիմում
<b>Ելքային տվյալներ</b>	ԱԿ1, ԱԿ3

Թեստավորման պրոցեսի մանրամասները ներկայացված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում:

### 3.1.2 Ռեեստրի գործառույթներ

Որպես ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտոր Ռեեստրում հնարավոր է գրանցվել հետևյալ եղանակներով՝


- Համաձայն դիմումի, եթե առկա է և ներկայացվել է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում ընդունելի որակավորումներից առնվազն մեկը հավաստող փաստաթուղթ՝ սերտիֆիկատ (ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում ընդունելի որակավորումների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2014 թվականի N 176-Ն որոշմամբ),
- Քննության/Թեստավորման բավարար արդյունքի ապահովմամբ:

Ռեեստրում առկա ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորների տվյալները տարանջատվում են երկու խմբի՝

- Վավեր (գործող), այն ՀՀ քաղաքացիները, որոնց տվյալներն առկա են ՌԷԵՍԿՐՈՒՄ և նրանք ժամանակի տվյալ պահին իրավունք ունեն ՀՀ հանրային հատվածում իրականացնել ներքին աուդիտորի գործունեություն,
- Անվավեր (կասեցված), այն ՀՀ քաղաքացիները, որոնց տվյալներն առկա են ՌԷԵՍԿՐՈՒՄ սակայն նրանք ժամանակի տվյալ պահին իրավունք չունեն ՀՀ հանրային հատվածում իրականացնել ներքին աուդիտորի գործունեություն, օրինակ շարունակական մասնագիտական վերապատրաստում չանցնելու, կամ այլ պատճառով:

Գործընթացը իրականացվում է Թեստավորման, Վերապատրաստման կամ Դիմումների ենթամոդուլից ստացված տվյալների հիման վրա՝ ինքնաշխատ:


Դիմումի ներկայացման պրոցեսը ներկայացված է նախորդ բաժնում, իսկ Թեստավորման և Վերապատրաստման պրոցեսները՝ «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում:





<b>Նպատակ</b>	Ռեեստրում գրանցում/տվյալների թարմացում համաձայն Դիմումի, Թեստավորման կամ Վերապատրաստման մոդուլից ստացված տվյալների
<b>Նկարագրություն/ընթացք</b>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ռեեստրի ենթամոդուլը ստանում է տվյալ հետևյալ մոդուլ/ենթամոդուլներից <ul style="list-style-type: none"> <li>○ Թեստավորման մոդուլից՝ թեստի արդյունքներ,</li> <li>○ Վերապատրաստման մոդուլից՝ վերապատրաստման արդյունքներ,</li> <li>○ Դիմումների ենթամոդուլից՝ դիմում՝ ուղղակի ռեեստրում գրանցման համար</li> </ul> </li> <li>➤ Եթե տվյալները ստացվել են Վերապատրաստման կամ Թեստավորման մոդուլներից. <ul style="list-style-type: none"> <li>○ Դրական արդյունքների դեպքում ավելացվում է կամ խմբագրվում է (ժամկետների երկարացում) տվյալ մասնակցի տվյալները ռեեստրում:</li> <li>○ Բացասական արդյունքների դեպքում՝ հեռացվում կամ փոփոխվում է կասեցված կարգավիճակի</li> </ul> </li> <li>➤ Եթե տվյալները ստացվում են դիմումների ենթամոդուլից, ավելացվում է կամ խմբագրվում է (ժամկետների երկարացում) տվյալ մասնակցի տվյալները ռեեստրում:</li> </ul>
<b>Հղում առկա գործընթացին</b>	BP-IA-01-06, BP-IA-02-01, BP-IA-02-02, BP-IA-02-03
<b>Տիրույթ</b>	Աուդիտորների կառավարման մոդուլ՝ Դիմումների և Ռեեստրի ենթամոդուլ, Թեստավորման մոդուլ, Վերապատրաստման մոդուլ
<b>Դերակատարներ</b>	Դիմորդ, Լիազոր մարմին, Աուդիտոր
<b>Մուտքային տվյալներ</b>	ԱԿ3, Թ1, Վ1
<b>Ելքային տվյալներ</b>	ԱԿ2, ԱԿ4

Ռեեստրի վարման լիազորություն ունի միայն Լիազոր մարմինը: Ընդ որում այն կարող է ունենալ հնարավորություն ռեեստրում առկա տվյալների ստացման կամ ուղղակի փոփոխությունների համար: Ռեեստրի ենթամոդուլը Լիազոր մարմնին թույլ կտա իրականացնել ուղղակի փոփոխություններ ռեեստրում գտնվող Աուդիտորների տվյալներում այնպիսի դեպքերում, ինչպիսիք են՝ դատարանի որոշմամբ լիազորությունների կասեցում և այլն: Ընդ որում Լիազոր մարմնի համապատասխան պաշտոնյան կարող է այդ տվյալը միայն հեռացնել կամ խմբագրել բացառապես համապատասխան հիմնավորմամբ կցելով փաստաթղթեր:



<b>Նպատակ</b>	Ռեեստրում ուղղակի փոփոխությունների իրականացում
<b>Նկարագրություն/ընթացք</b>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Լիազոր մարմնի համապատասխան իրավասություն ունեցող աշխատակիցը մուտք է գործում Ռեեստրի ենթամոդուլի համապատասխան ինտերֆեյս, որտեղ կատարում է գործողության ընտրություն հնարավոր երկու տարբերակների միջև՝ տվյալի հեռացում կամ տվյալի խմբագրում,</li> <li>➤ Համակարգը, կախված գործողության տեսակի ընտրությունից, համապատասխանաբար հեռացնում կամ խմբագրում է մասնակցին՝ կցելով այն փաստաթուղթը, որն իրավունք է տալիս կատարել նշված գործողությունը,</li> <li>➤ Լիազոր մարմնի աշխատակիցը բացված պատուհանում կատարում</li> </ul>
<b>Հղում առկա գործընթացին</b>	BP-IA-01-06, BP-IA-02-01, BP-IA-02-02, BP-IA-02-03, BP-IA-03-04, BP-IA-03-05
<b>Տիրույթ</b>	Աուդիտորների կառավարման մոդուլ՝ Ռեեստրի ենթամոդուլ
<b>Դերակատարներ</b>	Լիազոր մարմին

Մուտքային տվյալներ	Փաստաթղթեր՝ ֆայլեր
Ելքային տվյալներ	ԱԿ2, ԱԿ4

### 3.2 Ներքին Աուդիտ

Ենթամոդուլի միջոցով Աուդիտորները հնարավորություն են ունենալու ձևավորել տվյալ կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, իրականացնել ռիսկերի գնահատում, որի հիման վրա կազմել ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը, կատարել ներքին աուդիտի տվյալ տարվա տարեկան ծրագիրը, կազմել համապատասխան հաշվետվություններ, գործողությունների ծրագրեր: Աուդիտորները կարող են նաև իրականացնել վերստուգման գործընթացը, կազմել տարեկան հաշվետվություններ և դրանցից համապատասխանները ներկայացնել Լիազոր մարմնին: Ենթամոդուլը հնարավորություն է տալիս նաև Աուդիտորներին իրականացնել Աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը:

Աուդիտի ենթամոդուլը կիրառում է Ռեեստրի տվյալները, որպեսզի ապահովի միայն վավեր կարգավիճակով Աուդիտորների հասանելիությունը ենթամոդուլի գործառնություններին և տեղեկատվությանը:

Աուդիտի ենթամոդուլը տրամադրում է տվյալներ Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլին, տարատեսակ վերլուծությունների և հաշվետվությունների կազմման համար, ինչպես նաև Լիազոր մարմնին՝ տարատեսակ գործողությունների իրականացման համար, օրինակ՝ Վերապատրաստման ծրագրի կազմման համար Աուդիտորների կարիքները:

Աուդիտի ենթամոդուլն իր գործունեության համար անհրաժեշտ տվյալները ստանում է Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլից, ինչը հնարավորություն է տալիս ունենալ արդեն իսկ մշակված ելքային տեղեկատվություն՝ տարբեր տեսակի վերլուծություններ իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորները գործունեություն ծավալում են ոչ միայն ՀՀ ֆինանսների նախարարությունում, այլև ամբողջ հանրային հատվածում, հետևաբար առաջարկվում է Լիազոր մարմնում ստեղծել ներքին աուդիտի ավտոմատացված համակարգ (ՆԱ ծրագիր), իսկ ՀՀ հանրային հատվածի մյուս կազմակերպություններին տալ նշված ծրագրի օգտագործողների բանալիներ՝ համապատասխան իրավասություններով: Այսպես ՀՀ հանրային հատվածի մյուս կազմակերպությունների ներքին աուդիտորները հնարավորություն կունենան միանալ միասնական ծրագրին և իրենց կազմակերպությանը հատկացված տիրույթում իրականացնել գործունեություն՝ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի օրենսդրությամբ սահմանված գործողությունների հաջորդականությանը և պահանջներին համապատասխան:


Ներքին աուդիտի ավտոմատացված համակարգը կարող է ունենալ հետևյալ բաժինները.

- Ներքին աուդիտի միջավայրի սահմանում,
- Ռազմավարական և տարեկան ծրագրերի ձևավորում,
- Աուդիտ (տարեկան ծրագրի իրականացում),
- Գործողությունների պլանի սահմանում,
- Գործողությունների պլանի կատարման գնահատում,
- Տարեկան հաշվետվություն:

Ստորև ներկայացված է առաջարկվող բաժինների համառոտ նկարագիրը և դրա համապատասխան սխեմատիկ նկարագրությունը:

### 3.2.1 Ներքին աուդիտի միջավայրի ձևավորում


#### 3.2.1.1 Ներքին աուդիտի միջավայրի սահմանում



Նպատակ	Ներքին աուդիտի միջավայրի սահմանում
<b>Նկարագրություն/ընթացք</b>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Ներքին աուդիտի ղեկավարը, հիմնվելով Կազմակերպությանը վերաբերող ամբողջական տեղեկատվության վրա՝ կանոնադրություն, ռազմավարություններ, ոլորտի վերաբերյալ իրավական ակտեր և այլն, ձևավորում է Կազմակերպության կառուցվածքը (ծառը),</li> <li>➢ Ներքին աուդիտի ղեկավարը, հիմնվելով Կազմակերպությանը վերաբերող ամբողջական տեղեկատվության վրա՝ կանոնադրություն, ռազմավարություններ, ոլորտի վերաբերյալ իրավական ակտեր և այլն, նախանշում է Կազմակերպության ներքին աուդիտի ենթակա միավորները՝ գործառույթները, և կազմում դրանց ցանկը,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ներքին աուդիտի ղեկավարը Կազմակերպության ներքին աուդիտի ենթակա միավորները (գործառույթները) բաշխում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների վրա՝ որոշելու համար յուրաքանչյուր գործառույթի կամ դրա մի մասի համար պատասխանատուին,</li> <li>➤ Ներքին աուդիտի ղեկավարը կազմում է ներքին աուդիտի տեսակներից յուրաքանչյուրի բիզնես գործընթացի նկարագրությունը՝ դրանում սահմանելով մուտքային արժեքները, գործընթացի նկարագրությունը և ելքային ակնկալվող արժեքները: Այս տվյալն օգտագործվում է ներքին աուդիտի իրականացման ժամանակ:</li> </ul>
<b>Հղում առկա գործընթացին</b>	BP-IA-06-01, BP-IA-07-01, BP-IA-07-02
<b>Տիրույթ</b>	Ներքին աուդիտի մոդուլ՝ Աուդիտի միջավայրի ենթամոդուլ
<b>Դերակատարներ</b>	Աուդիտի ղեկավար
<b>Մուտքային տվյալներ</b>	Կազմակերպությանը վերաբերող ամբողջական տեղեկատվություն՝ կանոնադրություն, ռազմավարություններ, ոլորտի վերաբերյալ իրավական ակտեր և այլն
<b>Ելքային տվյալներ</b>	


3.2.1.2 Ռազմավարական և տարեկան ծրագրերի ձևավորում



Նպատակ	Ռազմավարական և տարեկան ծրագրերի ձևավորում
Նկարագրություն/ ընթացք	<ul style="list-style-type: none"> <li>➤ Առուիտորն իրականացնում է Առուիտորի միջավայրում սահմանված միավորների (գործառույթների) ռիսկերի գնահատում, Անալիտիկ-հաշվետվողական մոդուլից ստանալով անհրաժեշտ տվյալներ,</li> <li>➤ Ներքին առուիտորի ղեկավարը, հիմնվելով գնահատված ռիսկերի տեղակատվության վրա, կազմում է Կազմակերպության ռիսկայնության մատրիցան՝ ներքին առուիտորի տեսանկյունից, ինչպես նաև որոշում է</li> </ul>

	<p>կայացնում ռիսկերի գնահատման չափորոշիչների կիրառման և դրանց հաշվարկման վերաբերյալ,</p> <p>➤ Աուդիտի ենթամոդուլը, ելնելով ռիսկերի մատրիցայի տվյալներից, ինքնաշխատ ձևավորում է ռազմավարական պլանը, ընդ որում դրա առաջին տարին հանդիսանում է հաշվետու տարվա տարեկան ծրագիրը:</p>
<b>Հղում առկա գործընթացին</b>	BP-IA-07-03, BP-IA-07-04, BP-IA-07-05, BP-IA-07-06
<b>Տիրույթ</b>	Ներքին աուդիտի մոդուլ՝ Աուդիտի ենթամոդուլ
<b>Դերակատարներ</b>	Աուդիտի ղեկավար, Աուդիտոր
<b>Մուտքային տվյալներ</b>	Ա.28.1
<b>Ելքային տվյալներ</b>	ՆԱ1

### 3.2.2 Աուդիտ




<b>Նպատակ</b>	Աուդիտ
---------------	--------

<b>Նկարագրություն/ ընթացք</b>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ներքին աուդիտի ղեկավարը ներքին աուդիտի տարեկան ծրագրի յուրաքանչյուր միավորի համար ընտրում է պրոցեսը, որը ստեղծվել էր միջավայրի սահմանման փուլում</li> <li>➤ Աուդիտորը մուտքագրում է իրականացված աուդիտորական առաջադրանքի արդյունքները,</li> <li>➤ Համակարգը համեմատում է արդյունքները նախապես սահմանված չափորոշիչների հետ,</li> <li>➤ Համեմատման արդյունքում ձևավորում է հաշվետվություն,</li> <li>➤ Համակարգում ձևավորվում է բացասական արդյունքով գործառույթների ցանկը՝ հետագա գործողությունների պլանի սահմանման համար:</li> </ul>
<b>Հղում առկա գործընթացին</b>	BP-IA-08-01, BP-IA-08-02
<b>Տիրույթ</b>	Ներքին աուդիտի մոդուլ՝ Աուդիտի ենթամոդուլ
<b>Դերակատարներ</b>	Աուդիտի ղեկավար, Աուդիտոր
<b>Մուտքային տվյալներ</b>	ՆԱ.1.1
<b>Ելքային տվյալներ</b>	ՆԱ2



### 3.2.3 Գործողությունների պլանի սահմանում



Նպատակ	Գործողությունների պլանի սահմանում
<p><b>Նկարագրություն/ ընթացք</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ներքին աուդիտի ղեկավարը, աուդիտի պրոցեսում բացասական արդյունքով յուրաքանչյուր արձանագրման համար սահմանում է գործողությունների պլանը, նշանակում է պատասխանատու և կատարման վերջնաժամկետներ,</li> <li>➤ Կազմակերպության ղեկավարն ուսումնասիրում է առաջարկվող գործողությունների ծրագիրը: Կազմակերպության ղեկավարը, առաջարկություններ կամ առարկություններ չունենալու դեպքում հաստատում է այն, հակառակ դեպքում հաստատում է համապատասխան փոփոխությունների կատարումից հետո: Ընդ որում հաստատված գործողությունների ծրագրի յուրաքանչյուր կետի սկզբնական կարգավիճակը “Չի կատարվել” է, իսկ նշված ժամկետի ավարտից և համապատասխան աուդիտորական գործողություններից հետո այն կարող է նույնը մնալ, կամ փոփոխվել “Կատարվել է ժամանակին”, “Կատարվել է ժամկետի խախտումով” կարգավիճակներից մեկով՝ անհրաժեշտ հավաստումներով:</li> </ul>
<p><b>Հղում առկա գործընթացին</b></p>	<p>BP-IA-08-02</p>
<p><b>Տիրույթ</b></p>	<p>Ներքին աուդիտի մոդուլ՝ Աուդիտի ենթամոդուլ</p>
<p><b>Դերակատարներ</b></p>	<p>Կազմակերպության ղեկավար, Աուդիտի ղեկավար</p>

<b>Մուտքային տվյալներ</b>	Աուդիտի պրոցեսում բացասական արդյունքով արձանագրումներ
<b>Ելքային տվյալներ</b>	ՆԱ2

### 3.2.4 Տարեկան հաշվետվություն

<b>Նպատակ</b>	Տարեկան հաշվետվություն
<b>Նկարագրություն/ ընթացք</b>	Բոլոր պրոցեսների ընթացքում Անալիտիկ հաշվետվողական մոդուլին են տրամադրվում անալիտիկ տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է լինում ստանալ տարատեսակ հաշվետվություններ, օրինակ տվյալ կազմակերպության հաշվետու տարվա ներքին աուդիտի գործունեության տարեկան հաշվետվությունը: Նշված հաշվետվությունը ներկայացվում է կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին: Նշված հաշվետվությունից բացի կազմվում է նաև ամփոփ հաշվետվություն, որը ներկայացվում է Լիազոր մարմին: Ընդ որում Լիազոր մարմինը ևս հասանելիություն ունի անալիտիկ հաշվետվողական մոդուլին և այնտեղից վերցնում է այլ տվյալներ, որոնք հնարավորություն կտան գնահատելու ներքին աուդիտի համակարգի նախորդ տարվա գործունեությունը և այդ մասին հրապարակել համապատասխան հաշվետվություն:
<b>Հղում առկա գործընթացին</b>	BP-IA-09-01, BP-IA-04-01
<b>Տիրույթ</b>	Ներքին աուդիտի մոդուլ՝ Աուդիտի ենթամոդուլ
<b>Դերակատարներ</b>	Կազմակերպության ղեկավար, Աուդիտի ղեկավար, Լիազոր մարմին
<b>Մուտքային տվյալներ</b>	Ա28
<b>Ելքային տվյալներ</b>	ՆԱ2